5352

059
Д 89

ՀԱՄՊԷՐ ՋՈՒԱՆՇԻՐ

(31)

# ՕՐԱՑՈՅՑ

1922

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՏՊԱԳՐ. ՔԻՇՄԻՇԵԱՆ
Զմիւռնիա
1921

059
Զ-89

ՀԱՄԱՐ
059
Ձ-83

# ՕՐԱՑՈՅՑ

## 1922

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Գրատուն ԱՐԱՐԱՏ ԻԶՄԻՐ 19 | Librairie ARARAT SMYRNE 21

ՏՊԱԳՐ. Մ. ՇԻՇՄԱՆ
Զմիւռնիա
1921

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

* Նիրմակի
** Մեծ տուն
*** Տաղաւար
Ա. Առաւօտ
Աա. Կաթողիկէ Առաւօտ
ԱՄ. Ամենափրկչեան
ԱՆ. Անդրեական
ԱՁ. Առաջին ձայն
ԱԿ. Առաջին կողմ
Ադց. Մեծ պահքի
Աւ. Աւետարան
Բ. Երկրորդ
ԲՁ. Երկրորդ ձայն
Բշ. Երկուշաբթի
ԲԿ. Աւագ կողմ
Գ. Երրորդ
Գշ. Երեքշաբթի
ԳԿ. Վառ ձայն
ԳՁ. Երրորդ ձայն
Դ. Չորրորդ
ԴՁ. Չորրորդ ձայն
ԴԿ. Վերջ ձայն
Դշ. Չորեքշաբթի
Ե. Հինգերորդ
Եշ. Հինգշաբթի
Զ. Վեցերորդ
Է. Եօթներորդ
Ը. Ութերորդ
Թ. Իններորդ
Թյ. Այսօր զուար
Ժ. Տասներորդ
Ժա. Տասնևմէկերորդ
Ժբ. Տասներկուերորդ
Ժգ. Տասներեքերորդ
Ժդ. Տասնչորրորդ
Լ. Լամբրոնց
Կ. Կիրակի
Հ. Համբարձի
Հբ. Բողոքականաց
Հգ. Հանգստեան
Հկ. Հայ դրօշ պարզէ
Հյ. Հրէից
Հն. Ըստ հին տումարի
Հշ. Հարց չարչարան
Հո. Կաթողիկէ հոգւոյ
Ղ. Ղալթաց
Ղկ. Ղուկաս Աւետարան.
Մլ. Միլքիթեաց
Մպ. Մեծ պահոց
Մն. Մանկանց
Մտ. Մատթէոս
Մր. Մարկոս
Մրն. Մորոնեանց
Յ. Յունաց
Յվ. Յովհաննէս
Նչ. Նիստնկ. չարչարական
Շ. Շաբաթ օր
Շր. Շարական
Ո. Ուրբաթ
Պ. Պասքից
Պօ. Պահոց օր
Ռ. Ռուսաց
Ս. Սուրբ
Սփ. Սովորական փոխ
Տ. Տիմոթէոս
Տտ. Տիտոս
Քղ. Քարոզ
Ք. Քաղդէացւոց
Քկ. Կաթ. Քաղդէացի

Գիր տառեալ, Ո.
վերադիր, 13
եօթներեակ, Զ.
Տանուտէր, Այծեղջիւր
Բուն ձայնք, աջակողմ.

ՀԱՍՌ-Арм.ССР
38251-67
51549 - Ա.Հ.

## ՅՈՒՆՈՒԱՐ Նոր տոմար

19 բաժի, *1 ըստ Նոր տոմարի. Կ. Գի. Դ.Կ. Հչ. Գձ. Բ. Փոստ. Հ. Գկ. Գ. Գ. Զքն և Ասեալ: Հարմնիք: Լ. Կաղանդ: Ա. մլ. մրն. քկ. Կաղանդ: Սի. Հկ. Նոր տարին: Բարի ամին ըլլայ: Ազօթքը անթել հեռագիր մըն է:

20–2. Բշ. Գձ: Իգնատիոսի, Ագդէի. Մարութայի: Ըսելէ առաջ խորհէ:

21–3. Գշ. Գկ: Հայ Արշակունի Աստղեալ, թագաւոր, գործիչ Աբգար Եդեսիոյ, Նախավկայ և ՚ի Քրիստոս հաւատացեալ Անդրանիկ հիմնադրող հայ եկեղեցւոյ: Այսօր կը կարդանք կեանքը Աստուծոյ քրոջ Աբգարու. Հեգինէի՝ որ բնականից եղաւ Ս. Աստուածածնի յիշատակէմ: Յիսուս և Մարիամ օրհնեցին Հայ Ազգը իբրև անդրանիկ աստուածապաշտ և անդրանիկ քրիստոնեայ: Այսօր Գաղղիի 57րդ օրն է Նշանաւոր:

22–4. Դշ. աձ. որհ. Նշ. գձ. Յակոբայ գաւառ: Թգ. Ս. Ծգն: Որ ընթերցի: Ո՛վ մարդ, չիչէ թէ քու կեանք է որ պիտի ունէ քեզի ընկերութիւն մը նման

23–5 Եշ. ակ. Դաւթի և Յակոբայ: Թշ. Այսօր Զմիւռնիայի հայ դպրեվանքը կլենց մեծեալ արհեստակիցներուն յիշատակը կ'օրհնեն:

24-6. Ա. բծ. պհ. հզ. գծ. Օրհ: Մն. Խաչի. բծ:
Այսօր խնդրի: Նչ. գկ. Նահատակ: Հանգուստ ի
Մայր Եկեղեցւոյ Զմիւռնիայի: Յ. ձրագալ.
Ծննդեան: Լ. Յայտնութիւն: Մլ: մրն. Աւ.
քկ. ձրագալոյց Մկրտութեան:

25-7. Ճ. բկ. Ս. Ստեփաննոս սարկաւագ և նա-
խավկայ՝ որուն մահէն ծնաւ Պօղոս Ա-
ռաքեալը. քրիստոնէական ընտանեկան չէն-
քը հաստատող հզօր միաքը: Թլ. հ. ած. Ս.
Եւ Տէր: Յ. հս. ո- վ. ա. ք. Ծննդ Երիտ-
սարդի: Ափ. ժհ: 1866. Զմիւռնիայի մեծանուն
Տիգրան Յ. Տէօլէեան կը փոխանուի:

26-8 * Կ. գծ: Ե. կ. հչ. գկ. բ. Նախաւ: Հ. գծ.
գ. փառաս: (Եսլաւր): Հարանիք: Յանկարծ ուշ-
հաւր ողջակէզ կ'ընեն: Յ. սա. ո. դ. ա. սեն
Ս. Կայսին: Նչ. գծ. ցնծայ: կեցո: Թաղ:
Արցունքի մէկ կաթիլին մէջ հոգի մը կայ:

27-9. Եչ. գկ. Պետրոս և Պօղոս: Թլ. Նչ. գկ.
Որ էնն: Յ. Սանփանոս: Այսօր հանգչէս 'ի
Պետրոս Պաքրծեան Մանկապարտէզ Զմիւռ-
նիայի: 'Ի պատիւ Պ. Պօղոս Նուպար հայակաս
ազգասէրին սան ցնծութեան:

28-10. Գչ. գծ. Յակոբոյ և Յովհաննու Առա-
քելոցն: Բարեկենդան Ծննդեան: Թլ. Մր-
բրբկաղայց հոխը: 1843. Պօղոս պէյ Եուսուֆ
կը փոխանուի:

29-11. Դչ. գկ. պհ. հչ. գկ. բ. ապց. Օրհ. Տէր
Աստուած: Խաղաղ օր:



30-12. Եչ. ած. պհ. հչ. գկ. գ. հարցն մերոց:
1883. կը փոխանուի Յակոբ Սպարթալեան,
հիմնադիր-նորոգիչ (1877) Զմիւռնիայի Ս. Գ.
Լուս. Ազգ. հին հիւանդանոցին՝ որ այսօր
փառք է Հայոց: Ահ. ով պիտի չինէ անոր
երկու թեւերը: Եւ քը: Աստուած յաւսարէ
բոլոր բարերարաց հոգիները:

31-13. Ո. ակ. պհ. հչ. հզ. գկ. բանդ: Մն.
ակ. խաչի. Խաչ քու եղիցի Խաղաղ օր: Կրանն
բանի: Աշխատութեան մէջ փորձերու ան-
ձրոյ. օգտակար գործեր ըլլան ձանձրոյթ: Որ-
քերոն ձայ կը արալի այսօր:

1-14 ** Ճ. բծ. պհ. ԱՄԱՆՈՐ հին տումարի
(բաժի) հանձեան: Յ. ո. գ. ք. ա. Կայսեան:
Բ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Յ. Տօր. Յս. ի:
Ափ. ժհ: Եթէ գեղեցիկ տարւոյ այսօր կամաց
խոսս. Զատիկը ցարաւ կը ստենեց: Մ'ի այր,
կենդկ հետ ամենայն փարմութիւն համար հա-
չա պիտի տաս Աստուծոյ:

2-15 * Կ. գ. բկ. հչ. գծ. միածին: Հ. բկ. կանոն.
(բարոյր): Արբիչին հոգը հանճ է միշա:

3-16. Եչ. գծ. պհ. հչ. գկ. Օրհն. Տէր Աճ. օրհ:
Մեծն մեծ է գոհ մարդը:

4-17. Գչ. գկ. պհ. լ. Անտոն: Բ. յեչ. Ս. Կայսին:
Անձրեւոտ: Մի՛ տար մարդ թեան բաժին ու փա-
փաղ. մարդթեան բաղցը չաղի՛ յոց:

5-18. Դչ. գծ. ձրագալոյս: Նաւակատիք: Յ. հս.
ո. գ. Աւ. Բ. Մկրտութեան ձրագալոյս: Կեց-

ցէ արդարութիւնը 1925էն վերջը։ Խթում։

6-19. Եշ. գկ. ** Ս. ԾՆՈՒՆԴ և Մկրտութիւն։ Քս. ծնաւ և յայտնեցաւ։ Մինչև ուտիքը 18 օր է։ Յ. ս. հս. դ. ա. ք. Մկրտութիւն Յս.ի։ Մտ. հկ. լ. Տօն Անուան Յս.ի։ Ամէն մարդի հետ եղիր խոնարհ, հեզ, որ մարդ եղբայրները յաճախ սիրեն քեզ։

7-20. Ո. աճ. ** Յիշատակ Մեռելոց։ Հկ. հս. Օր մեռելոց։ Յ. ս. գ. ա. Ս. Կարապետ։ Ան. քս. 3 օր ծոմ Նինուէի։ Անապատ։ Մեռելորհնէք (Գանչէշմէ)։ Անմեղապարտն Աստուած իրր ա-ւետեր կուտայ մեզի սիրելիներ, ազատ ատենն ալ իր ատենը կու կ'առնէ։ Ուստի քու մե-ռած սիրելիներուդ աւելի փայլուն հոգւոյք-ներուդ համար չնորհակալ եղիր Աստուծոյն։

8-21. Ծ. ահ։ Այսօր Հայոց վեցերորդ ամիսը և-գոյ Արեգ ամսոյն օրն է։ Ս. Ստեփանոս։ Դ. Առաջին հրաշք։ Լաւ կամ ծախս ալ ունենաս, գործեա օրը իրիկուն կ'ըլլայ։ Ինչո՞ւ չարգ-րես աղօթքով, երգով, գործով։

9-22. * Կ. բճ. 762 թուականին կը ծնի Վահան Զաւանցիր, որ 788ին ձեռնադրեց Սիւնեաց իշ-խանութիւնը։

10-23. Բշ. բկ։

11-24. Գշ. գճ. ք. Ս. Կարապետ։ Յարա։

12-25. Դշ. գկ։ Խառնակ օր։

13-26. Եշ. գճ. ** Կրկնակի Ծնունդ։ Հաղորդութ-եան։ Ան. յիշ. բանտարկեալ ննջեցելոց։ Լ.



Պօղիկարպոսի։ Հարանիք։

14-27. Ո. գկ. աչ. Նշ. ահ. արեգակն։ 1879. Պատկանեան Գէորգ քհնյ., Կ. Պոլսեցի, կը վախճանի Աթամիրօբօլի մէջ։

15-28. Ծ. աճ. Ծննդեան Յաղ. Կար. Մկրտչին։ Մի՛ ըլլար գերի ցանկական կիրքերդ, մի՛ գի-ջանիր քու անարդ հաճոյքիդ։

16-29. * Կ. ահ։ Հարանիք։ Նոր լուսին։

17-30. Բշ. բճ. Պետրոսի, Վլասի, Արիստակէսի, Յ. բ. ս. Ս. Անտոն։

18-31. Գշ. բկ։ Անտոնի. Տրիփոնի, Պարսամայ։ Օնոփրիոսի։ Յ. ս. ք. Աթանաս և Կիւրեղ։ Լ. Մարուէլ։ Շատ պրտալուող և չատ խօսող մարդ մը անպարկեշտ կ'ընէ իր գաւկրները։

## ՓԵՏՐՈՒԱՐ նոր տոմար

19 բաւի, 1 ալաֆրանկա. Դշ. գճ. աչ. բարի անիս, առողջութիւն և յաջողութիւն։ Խառ-նակ օր։ Սասանիկ կարկատար օդը կը բանայ։

20-2. Եշ. գկ. Թէոդոսի թագաւորին. Մանկանց Եփեսոսի։ Լ. մրն. մլ. քկ. Ան. Տեառ-նընդառաջ։ Ս. Հանօրէն ննջեցելոց։ Յ. Եւ-թիմիոս։ Խարազէա եղիր և միամիտ չէշ մարդ-գերու մէջ։

21-3. Ո. գճ. աչ. Եկեղեցիկը եթէ այսօր երեւայ, ձմեռ կ'ըլլայ առատին։ 1872ին Կ. Պոլսոյ վե-րայ երեւաց հրաշալից հրաշալի։

22-4. Շ. գկ. Աթանասի, Կիւրղի: Լ. Անարէ:
Ձիւն բերող հովեր: 814ին Վասակ առաջին
Զուանշիր նահանգ իշխան Սիւնեաց:
23-5. * Կ. աձ. Առաջաւորաց Բարեկենդան: Ա.
Ք. Ծամ Նինուէական: Փոթորկոտ օրեր: Մո-
մի կտոր մը ամբողջ Մոսկուան այրեց:
24-6. Բշ. ակ. Ծամ ի պատրաստութիւն Զատի-
կին. բարեխօսութեամբ Ս. Սարգիս Երագա-
հաս զօրավարին: Մարմինը բաղնիք, հոգին
բարի գործ կը պահանջէ: Լ. Տօլսթէօյ:
25-7. Գշ. րձ. Ծամ: 1893ին Կ. Պոլսոյ Ոսկեղ-
ջիւրը սառեցաւ: Յ. Գր. Աստուածատրեան: Ք.
Չորս Աւետարանչաց: Բն. Յիշատակ Մեռե-
լոց: Վատ օր:
26-8. Դշ. բկ. Ծամ: Ջուրի մէջ ապրողը չի ծա-
րաւիր:
27-9. Եշ. գձ: Ծամ. մ. Աբրայ Մարօն: Յ. Ա-
կիւրեան: 1918. Զարմանն Ալլեան Հանիա
երկրորդի անէծայուշ գաղանին մահը:
28-10. Ա. գկ. Ծամ: Աղաչխարութեան քարո-
զիչ Յովնան: Ք. Յիշ. Յովն և Աստրի փարգա-
պետաց: Հովուն և Ներխան ի Մէնէմէն:
29-11. Շ. գձ. Երագահաս Ս. Սարգիս զօրավար
վկային. իր ձիին վրայ գտնուող իր մարտի-
րոս նահատակ գաւկին և տասնեչորս զինա-
կիրներուն տօնը: Ոսխա ի Մէնէմէն: Հարաւա-
նիք: Այսօր իրենց բաղնեբէն դուրս կ'ելլան
ձուկերը: Յ. Պարոն Նշխարեան Իգնատիոսի:

10

Զատիկէն առաջ անեցողին մեծ պահքը շատ
կարճ կ'երեւայ:
30-12. * Կ. գկ. Եշ. գկ. Անառ: Հարաւանիք:
Յ. Բարսեղ, Գրիգոր. Ասկեարեան: Ունեցիր
առատաձեռնութեան աչք և ընկերի աչք:
31-13. Բշ. աձ. Աստուածոց: Յ. Յիշատակ Մե-
ռելոց: Օր մը պէտք յատուկ մեռելներուն
և ողջերուն մինչեւ գտնուած հաղորդակցու-
թեան գաղտնիքը: Ձիւնաբեր հովեր:
1-14. Գշ. ակ. Սուքիասեանց: Ք. Յիշ. Ստե-
փանոսի: Ուրիշին աչքին վրայ շատ թեթեւ
կ'երեւայ լեռ մը: Այսօր լուսնի Փետրուար
է: Բարի ամիս:
2-15. Գշ. րձ. պհ: Եթէ խտանութեամբ աղէկ պահես,
խտանութեամբ ալ աղէկ կը պահէ տունդ: Յ. Ս.
Գ. Հս. Տեառնընդառաջ: Ա. Եփրեմ:
3-16. Եշ. բկ. Ոսկեանց: Շատակեր մարդը եր-
կաթի խոզ է խելքը փորին փակած:
4-17. Ա. գձ. պհ. Փչող հովէն օգտուէ:
5-18. Շ. գկ. Պարթեւ Ս. Սահակ: Փառատարածն
հայրապետաց յանուն և չինող մարդէն:
6-19. * Կ. գձ. Հշ. գկ. Որ ահեղակերպ: Հարա-
նիք: Աշխարհին ջերմութիւնը օդին կ'ազդէ:
Խօսքով պտուղ չհասուիր:
7-20. Եշ. գկ. Մակարի, Պրոկի, Կիւրղի. Սալէն
ահինոջ: Մէկ գալով բացէ՛ր, հինգ բանէ
պէտք գոցեր: Մէկ գիրք ալ աղեցէ՛ր, չորս գրպա-
նոց պէտք բաներ: Հայոց կոթնեերու Մեհե-

11

կան ամիսին առաջին օրն է այսօր։ Բարի գալ մեզի։ Ս. Սեւերիանոս։

8-21. Գշ. աձ. Ղեւոնդեանց մերոց քաջաց քահանայից։ Կղերականաց տօն ընդհանուր։ Կը շնորհաւորենք Զմիւռնիոյ կարող Առաջնորդ Տ. Ղեւոնդ Դուրեան եպիսկոպոսի, Մայր Եկեղեցւոյ աւագերէց Տ. Ղեւոնդ Աւագ քհնյ. Ծաղիկեանի, ազգասէր Պ. Լեւոն Մէճէրճեանի տօնը։ Յ. Երկու Թէոդորոսաց։ Կիները թող ըլլան խնայող, եթէ կ'ուզեն իրաւունք շահիլ։

9-22. Դշ. ակ. պհ. հչ. հգ. գձ. Որ փառօք։ 1732 կը ծնի Մեծն Ճորճ Ուաշինկթըն։ Ամ. տօն։ Երկինք ամպամած։ Թէ որ բարերարին մեզ ըլլայ, ձմեռներն խելքն քիչ կ'ուտեն։ Նշ. գկ. Նորահրաշ։ Ձրաց եւ խունկ տարէք գերեզմանոցները։ Ծաղկազարդ պճնեցէք տապանները։ Մեռելօրհնէք ընդհ. հայ նահատակաց. Չմոռնաք մինչեւ 1922 փետր. 9-22 ինկող հայոց։ 1925ին մենք ալ կ'ունենանք մեր Պանթհէոնը։

10-23. Եշ. բձ. ** Տն. Ամ. Սրբոց անմահից քաջաց հայոց վկայից ՎԱՐԴԱՆԱՆՑ։ Յիշատակ հաւօրէն ննջեցելոց։ Ով որ հայրենիքին համար մեռնելու կը պատրաստուի, փառաւոր մարդ մըն է ան։ Ով որ ազգային կրօնական սրբութիւնները կ'անարգէ ու միեւնոյն ատեն անմիջապէս «հայրենիքս, հայրենիքս» կը պոռայ, այնպիսի մէկը խաչագող մըն է պարպաղէս։ Զմիւռնիոյ քաջակորով «Զարթօնք» միութիւնը կը կազմակերպէ հայեցի հանդէսներ։ Կեցցէ հայը՝ որ 1925ին մահին անգամ պիտի յաղթէ։

11-24. Ո. բկ. պհ. հչ. հգ. գկ. Յու։ Մն. Խաչի։ բկ. Որ յաղթու։ Հ. Մաթիոս։

12-25. Շ. գձ. Կ. Պօղոս Ա. Ժողովոյն։ Մինչեւ կէսօր հարթնիք։ Այսօր մեր նախահօր ի դրախտէն վտարուելուն ի յիշատակ եկեղեցիին վարագոյրները կը գոցեն այս իրիկուն։

13-26. * Կ. գկ. հայոց, յ. հռ. ո. գ. ա. ք. է. Քառասնորդական պահոց առաջին Կիրակի։ Բուն Բարեկենդան։ Բարի Զատիկ ամենուդ։ Շնորհաւոր Մեծ պահք։ Իրիկուն կը բանան միայն մեծ Սեղանի վարագոյրը։ Էյս գաւաթ. Նշ. գձ. Այսօր։ Երանի թէ առողջութիւն ընէիք հայ հին հաւատքին կրակը վառել տալ մեր պզտիկներուն։ Նոր հարսերը կը փախչին եկեղեցի։ Հաւատարմութիւն ըրէք ամուսնոյ առջեւ։ Այսօր ալրալիք կ'երեւայ օդին մէջ։ Նոր լուսին։ Բարի ամիս եւ բարի յաջողութիւն։ Հով եւ անձրեւային։

14-27. Բշ. աձ. ** Տեառնընդառաջ։ Այսօր արեւին ջերմութիւնը ջուրին կ'ազդէ։ Յ. ս. գ. ք. ա. Փակեալ Խորան է։ Հայոց Փակեալ Խորան է երեկոյեան ժամերգութենէն ետքը։

15-28. Գշ. ակ. մգ. Անապատի մէջ արդեօք որքա՞ն աւերակ բաներ կան, որոնք քու նը-

մանուկներուդ կարասութիւնը կը ծածկեն ներէ ուլեր և տասս։

## ՄԱՐՏ նոր տոմար

16-1. Դշ. բձ. մգ. Ներսէս Շնորհալիին տաղերգած բնապաշտ հայոց հին ցեղասառնները պահող արեւապաշտ հողեղմայլ տաղերը կ'երգուին։ Մի՛ ընկեր ուրիշին քու չուզած բանդ։ Լ. օր մահուց։

17-2. Եշ. բկ. մգ. Սիւնեաց մէջ իշխեց 844-895 Վասակ - Գաբիկ Աշոտին Զաւանչիր ի Բագաց Սիւնեաց հայոց։

18-3. Ո. գձ. մգ. Աղօթք ըլլալու համար Միհրա կարգաւ։

19-4. Շ. գկ. մգ. Թէոդորոս հայոց, նա. յ. ո. կարողութիւնը չար ընկեր մըն է։

20-5. * Կ. դձ. մգ. Աս. Անաստասի Մովսէսեանի օծի յիշատակ։ Ժամանակին վրայ մի՛ բանար։

21-6. Բշ. դկ. մգ. Այսօր արեւին ջերմութիւնը կ'ազդէ հողին։ Ուսեալութեան կոչումն է ազգութիւնը։

22-7. Գշ. եձ. մգ. Օդին մէջ կը լսուին կռունկին կանչները։ Ք. Ցիշատակ Միսեկայ։ Լ. Թովմաս Արծրունեացի։ Արեւ մտած տեղը բռնելը չեմանար, Միհրա մտած տեղը՝ հրեշտ կը մնայ։



23-8. Դշ. եկ. մգ. Աս. Մար Գաբրիելի։ Զգօնաւորութիւնը հեշտութիւններուն էն նուրբն է։

24-9. Եշ. զձ. մգ. յ. Կարապետ Յովհաննէս։ Հեշտութեան դառնութիւն տակը ցաւը միշտ ունենայ։

25-10. Ո. զկ. մգ. յ. Գր. Աստուածաբանի։ Ձիւն ցուրտ։ Աղէկ ապրիլ պէտք է, չէ թէ երկար ապրիլ։

26-11. Շ. էձ. մգ. Կիւրղի, Անեցի։ 1003ին, Մարտ 11ին կը վախճանի Գրիգոր Նարեկացի. մէկ կնոջ այր Խոսրով եպիսկոպոսի որդին։

27-12. * Կ. էկ. Անառակի կ. մգ։ Զգօնաւոր աշխատութիւնը կը զօրացնէ։ 1917. Ռուսաց յեղափոխութիւն։

28-13. Բշ. ըձ. մգ. Երկիրը կուտայ ամէն բան, սակայն կ'առնէ ամէնը մէկ։

1-14. Դշ. ըկ. մգ. հն. Մարտ մէկ։

1-15. Գշ. թձ. մգ. Ա. Մ. Եփրեմ։

3-16. Եշ. թկ. մգ. Վերջ Ձմեռնի։

4-17. Ո. ժձ. մգ. Յանցանքդ զիս խմաստուն ըրաւ։

5-18. Շ. ժկ. մգ. Յովհաննէս Օձնեցի, Եսայի Նչեցի, Որոտնեցի, Գրիգոր և Մովսէս Տաթեւացի։ Լ. Կաբրիէլ։

6-16. * Կ. գձ. մգ. Տնտեսի։ Լ. մրն. Աս. քհ. Յովսէփ։

7-20. Բշ. գկ. մգ. ը. Գիւտ Ս. Խաչի։

8-21. Գշ. գձ. մպ. պ. Պալլադ: Լ. Պէնուա և Պէ-
րին:

9-22. Դշ. գկ. մպ. լ. Գալթէրին ար Մխէն: Յ. ա. Բաստոն մեռաւ: (Միջինք) Հայոց Տրդ Արեգ ամսին առաջին է այսօր: 1776 Մարտ 22ին հայերէն առաջնին օրացոյցը հրատարակ եղած է:

10-23. Եշ. աձ. մպ. 1898. Տիգրան Զաւհաճեան անօթի մեռաւ և թաղուեցաւ ի Գանջէջմէ: Միհրաբ Սարգսեան և Զաւհաճեան տարին հինգ անգամ միայն Աւլանեան Տ. Միհրան քահանային այցը կ՚ընդունէին: Ո՞ւր է Լեալէօրիճին և գրական ըմբռնողութիւնը ծախահարայ երիտասարդութիւնը:

11-24. Ո. ակ. մպ. յ. Վլասիոս: Յիշատակը՝ բարեկամ չանհացողներուն բարեխօսն է. յիշատակը՝ սիրտի կրօնն է:

12-25. Շ. բձ. մպ. Բաստոն մանկանց: Լ. մէ. մրն. սա. քկ. Աւետում: Ճշմարտութիւնը՝ ժամանակին աղջիկն է:

13-26. * Կ. Դատաւորի: Կ. բկ. մպ. 1917 Մարտ 26ին ա. Նիքոլա Զարը նահատակուեցաւ:

14-27 Բշ. գձ. մպ. Լուսին:

15-28. Գշ. գկ. մպ. Քիչ խօսէ, շատ գործէ:

16-29. Դշ. գձ. մպ. Գարնանամուտ: Հ. Աւգիս: Լ. Կոնթրան:

17-30. Եշ. գկ. մպ. լ. Գլխատագ:

18-31. Ո. աձ. մպ. լ. Պալլադին: Հակառ և հան-



գէս: Նշ. Երբ ինքզինքս կը քննեմ, կը գիտեմ որ աւելի վարժ եմ ուրիշներուն թերութիւնն ուղղելու՝ քան թէ իմ թերութիւններս:

## ԱՊՐԻԼ Նոր տումար

19 Մարտ Հն. 1 Ապրիլ Նոր տումար. շ. ակ. մպ. ** Հայ հոգիներու լուսատու հայ Արշակունի Պայազատ Ս. Գրիգոր Լուսաւորչին Հայաստանի Արտաշատ բերդին ներքին վիրապին մէջ բերդարգելումին յիշատակն է այսօր:

20-2 * Կ. Գալստեան: Բձ. մպ. լ. ար Բոլ:

21-3 Բշ. բկ. մպ. Հաւատքը առանց գործի մեռած է:

22-4 Գշ. գձ. մպ.

23-5 Դշ. գկ. մպ:

24-6 Եշ. դձ. մպ.

25-7 Ուր. դկ. մպ. հւ. յ. ս. դ. ա. Աւետում: 102րդ տարեդարձ Հելլէն Անկախութեան:

26-8 Շ. աձ. մպ: Հայոց. յ. ս. Ղազարոս:

27-9 ** Կ. ակ. մպ. հայոց, հւ. յ. ս. դ. ա. ք. Ծաղկազարդ: Յիսուս կրնա՞յ մտնիլ սիրտէդ այսօր: Մաքրա՞ծ ես սիրտդ բարի գործերով: Հկ. ափ: Դռնբացէք:

28-10 Բշ. բձ. մպ: Աւագ Երկուշաբթի:

29-11 Գշ. բկ. մպ: Աւագ Երեքշաբթի:

30-12 Դշ. գձ. մպ: Աւագ Չորեքշաբթի:

31-13 Եշ. գկ. մպ. ** Աւագ Հինգշաբթի:



3825/-67

1-14 ** Աւագ Ուրբաթ, գձ. մպ. հկ. կէս սըգաւոր: Ափ: Հն. Ապրիլ 1: Գթառատութիւնը կրօնքին կեանն է:

2-15 Աւագ Շաբաթ, գկ. Նաւակատիք. Խթում: Շերամէն գառ առի՞ր: Ուխտեցի՞ր մեռնիլ ապրելու յոյսով: ա. Ցիշ. Մեռելոց:

3-16 *** Քս. յարեաւ ի մեռելոց: աձ: Բոլոր մեծ մարդերը մինչեւ գերեզման գործեցին: Ցիսուս էր որ մեռնելէն ետքը ապրեցաւ, գործեց, յաղթեց և այսօրուայ մարդասիրութեան հիմը դրաւ: Հա ու դ լ մլ քկ ա աս մին ալ:

4-17 ** Ցիշատակ Մեռելոց: ակ Բշ. (Գանչէշմէ):

5-18 ** բձ գշ հկ: պ. Հասան Հիւսէյն:

6-19 Դշ. բկ նշ ակ: Խորհուրդն: Կեցո: Ընկալ:

7-20 ** Աւետում: Եշ. գձ: Ափ. հկ:

8-21 Ու. գկ ա ք: Ամենայն սրբոց: Հայոց Ցրդ Անհկան ամիսին մուտքն է այսօր: կեցցէ հայը, իսկ 1925ին կեցցէ Հայաստան:

9-22 Շ. գձ: Գլխատում Ս. Կարապետի:

10-23 ** Հայոց փկ ա լ դ ու հռ մին մլ աս յ: Կրկնազատիկ:

11-24 Բշ. աձ մին մլ քկ Ս. Գէորգ: Հարմնիք:

12-25 Գշ. ակ: լ Մարկոս:

13-26 Դշ. բձ: Նոր լուսին:

14-27 Եշ. բկ: 1749 Աբբահայր Մխիթար վախճանեցաւ:

15-28 Ու. գձ:

16-29 Շ. գկ:

17-30 գձ ** Կանաչ Կիրակի (Մէնէմէն):



## ՄԱՅԻՍ նոր տումար

18-1 դկ Բշ. դ Ս. Գէորգ:

19-2 աձ Գշ. ա ք Ամենայն սրբոց:

20-3 ակ Դշ. լ Գիւտ խաչ: Սիւնեաց մէջ իշխեց Զագիկ երկրորդ Զաւանշիր (895-906): 1916ին անգլիացիք 34 ուժանակ նետեցին Իզմիրի վրայ:

21-4 Եշ. բձ.

22-5 Ու. բկ:

23-6 Շ. գձ: յ ու ա Ս. Գէորգ, Խըտըր Իլիաս:

24-7 * Կարմիր Կիրակի: գկ (Եփեսոս): ք Սուրբ Գէորգ:

25-8 Բշ. գձ:

26-9 Գշ. գկ: ու Ս. Նիքօլայ:

27-10 Դշ. աձ:

28-11 Եշ. ակ: մլ Նիկլոյ Ս. Ժողով:

29-12 Ու. բձ: քկ Շամօնէ տիկին և զաւակները:

30 13 Շ. բկ: նշ Հսկում ի Պաւրնապատ:

1-14 ** գձ Կ. Երեւման Խաչ, յԵրուսաղէմ: (Պաւրնապատ): հն Մայիս: 906ին Սիւնեաց մէջ իշխեց Զաւանշիր առաջին: Հարմնիք:

2-15 Բշ. գկ յ Աթանասիոս: 1919ին Հելլէնները գրաւեցին Իզմիրը:

3-16 Գշ. գձ:

4-17 Դշ. գկ:

5-18 Եշ. աձ:

6-19 Ու. ակ:

7-20 Շ. բձ:

8-21 * Կ. բկ։ Այսօր հայոց 10րդ Մարերի ամիսին մուտքն է։ Բարի ամիս։ յ ս Յովհ. Առ։
9-22 Բշ. գծ ս Ս. Նիքօլայ։
10-23 Գշ. գկ։ Սեխի փոթորիկ։
11-24 Դշ. դծ ս Կիրիլլոս և Մեթոտիոս. (1879) անգլօ-թուրք պաշտպանողական զինակցութ։
12-25 Եշ. դկ ** Հայոց հս յ լ ս դ ա ք քկ աս մըն մը Համբարձում։ Սփ հկ վիճակ։ Նոր լուսին։ Բարի ամիս։
13-26 Ո. ած Դժուար պահք։ լ Տօն հաղորդութեան։ հկ սփ։
14-27 Շ. ակ։
15-28 ** Կ. բծ հկ հայոց և հս Հայատօն։ Երկրորդ Ծաղկազարդ։ յ ս Նիկիայ ժողով։ Հարանիք։
16-29 Բշ. բկ. 1870 կ. Մայիս 16-28ին ծնաւ ի Գումգափու Կ. Պոլսոյ, Վարդ-Զադիկ Զուանշիր, Ուսուցիչ։
17-30 Գշ. գծ լ Ֆերտինան։ Կապէն։
18-31 Դշ. դկ լ Անժէլ։ Ամ. Մեռելոց։

## ՅՈՒՆԻՍ Նոր տոմար

19-1 Եշ. դծ խոալ. տօն ազգային։ դ Երթ Յիսուսի յեգիպտոս։
20-2 Ո. դկ պհ։ Յիշատակը չի մոռցուիր։
21-3 * Շ. ած յ ս դ Յիշատակ մեռելոց։ Տօն անուան հելլէն արքայ արծուարդի Կոնսթանթինոսի։



22-4 ** Կ. ակ հայոց յ հս լ ս դ ա Հոգեգալուստ։ (Կէօզլթէփէ և Ազատ)։ Բարեկենդանք Ս. Եղիայի։
23-5 Բշ. բծ պհ ս յ Երրորդութիւն։ (Այ Թրիադա) սփ հկ։ դ Յիշատակ Մեռելոց։ դ. ք. պահք Ս. Առաքելոց։
24-6 Գշ. բկ պհ 1860 Սահմանադրութիւն Թըրքահայոց։ լ Յիսուսի սիրտին տօն։ աս քկ Տօն սրտին Քրիստ. ի։ 1870 Մայիս 24-5 Յունիսին կը մեռնի Վարդ Զադիկ Զուանշիր, ի Գումգափու, Կ. Պոլիս։
25-7 Դշ. գծ պհ 1891 խեղճ վիճակի մէջ մեռաւ անմահ երգիծաբան Յ. Յ. Պարոնեան։ Գնա մեռիր, եկուր սիրեմ։
26-8 Եշ. գկ պհ ս յ ժողով Նիկիոյ։
27-9 Ո. գծ։ 1878 Ղուկաս Պալթազար մեռաւ։ Վատ բան է ապերախտութիւնը, ո՛վ երիտասարդներ։ Ո՞ւր էք։
28-10 Շ. գկ։
29-11 ** Կ. ած։ Յիշատակ Եղիա մարգարէին։ Հարանիք։ նշ դկ Անձինք։
30-12 Բշ. ակ ** Հախփախեանց (Խոսէմիշ, Նագելլի)։ 1921 Իզմիր այցելեց Կոստանդին ԺԲ Թագաւոր Հելլէնաց։
31-13 Գշ. բծ ** Գայիանեանց։
1-14 Դշ. բկ պհ հն Յունիս 1։ հշ ած ա Որ հայիս։ նշ գծ զմարգարէ։
2-15 Եշ գծ Կարապետին Յովհաննու և Աթանագինեայ։

3-16 Ո. գկ պհ նչ բձ Ո՛վ երջանիկ։

4-17 Շ. գձ ** Յիշատակ ելին ի վիրապէ Գրիգորի Լուսաւորչին։ Թյ հգ հկ։ ափ։ հ գձ Ուրախ լեր։ Կեցո։ Թագ։

5-18 ** Կ. դկ. Տօն Կաթուղիկէ հայ եկեղեցւոյ Էջմիածին։ Հարանիք։

6-19 Բշ. աձ Մանկանց Բեթղեհէմի։

7-20 Գշ. ակ Նունիա և Մանիա։ Այսօր հայոց Մարգաց ամսին առաջին օրն է։ Բարի ամիններ։

8-21 Դշ. բձ պհ։

9-22 Եշ. բկ Սահակ, Յովսէփ, Սարգիս, Բագոս։

10-23 Ու. գձ պհ։

11-24 Շ. գկ Պարթև, Ներսէս և Խադ։

12-25 * Կ. Բարեկենդան գիւտի նշխարաց Գրիգորի Լուսաւորչին պահոց։

13-26 Բշ. դկ պհ Եպիփան, Բարեղաս։

14-27 Գշ. աձ պհ Կոստանդիանոսի և Հեղինեայ։
1918 Յունիս 14-27ին Իգդիրի մայր եկեղեցւոյն մէջ օծուեցաւ նահատակ Յակոբ - Աշոտ եպիսկոպոս Փափազեան և թաղուեցաւ ի Գանչէշմէ։ 1920 Զմիւռնիայի Հայ Ընթերցասան յիսնամեայ յոբելեանը։ «Այսօրուայ երախտագիտական արտայայտութիւնները անմնալով, ես մոռցայ երեսնամեայ աքսորեան աշխատութիւնս և հոգեկան տառապանքներս։ Կեցցէ՛ Հայ օրհնեալ Ազգը։ Հայկ Շահինեան»։ «Հազար 943ին կատարուելիք Հայ Ընթերցասանին 75ամեայ և 1968ին կատարուելիք և ապրուելիք 100ամեայ յոբելեաններուն ներկայ ըլլալիք հայ երկսեռ հանդիսականները ես կը շնորհաւորեմ ջերմագին՝ հոգիի աչքերով։ Համպէր Զուանշիր»։

15-28 Դշ. ակ պհ։

16-29 Եշ. բձ պհ Թէոդոտոսի, Թաւիլայ, եօթը կուսանացն Գաղատիոյ։

17-30 Ու. բկ պհ նչ Ղեւոնք։

---

## ՅՈՒԼԻՍ Նոր տոմար

18 Հն Յունիս, 1 Յուլիս ալաֆրանկա, ** Շ. գձ Գիւտ նշխարաց Լուսաւորչին մերոյ (Իզմիր և Մանիսա) Թյ։

19-2 * Կ գկ հչ ակ ա Որ եկիր։ հ գկ ա Յարեաւ։ Հարանիք։

20-3 Բշ. դձ Անտոնիոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի, Փոտինոսի։

21-4 Գշ. դկ Դանիէլի, երեք մանկանց։ 1777 ամ. ազգային տօն։

22-5 Դշ. աձ պհ։

23-6 ** Եշ. ակ Թարգմանչաց Սահակայ և Մաշթոցի։ ու դ Հրաշից Ս. Կարապետի։

24-7 Ու. բձ պհ։

25-8 ** Շ. բկ Տրդատայ Արշակունւոյ, Աշխէնի, Խոսրովիդխտոյ։ Ճն դձ Որ գերագոյն։ Ճաշու բձ Աստուած փրկիչ։ հ աձ Սուրբ ես։ Նչ ակ որ նախ։

26-9 ** Կ. գծ Գիւտ տփոյ Ս. կուսին: հարանիք:
27-10 Բշ. գկ Կաղխաթրադաւի, 49 վկայից, Ղուն-կիանոսի:
28-11 Գշ. գծ Զաքարիայի: քկ. Ս. Յակոբ Մըծ-բընայ Հայ Արշակունւոյ:
29-12 Դշ. գկ պհ յ ռ ա ղ Պօղոս Պետրոս: Սփ:
30-13 Եշ. ած Եղիսէի մարգարէին: յ ա Երկոտա-սան առաքելոց:
1-14 Ո. ակ պհ Այսօր հն Յուլիս:
2-15 Շ. բծ Երկոտասան և Պօղոս առաքեալներ:
3-16 * Կ. բկ Բարեկենդան Վարդավառի պահոց:
4-17 Բշ. գծ պհ:
5-18 Գշ. գկ պհ:
6-19 Դշ. գծ պհ:
7-20 Եշ. գկ պհ Այսօր հայոց Հրատից ամսին սկիզբն է: լ Մարգարիտ: մլ մրն Ս. Եղիա: յ Այլա Բիրեաքի:
8-21 Ո. ած պհ ա Մարիա Գալանաքի:
9-22 Շ. ակ Յիշատակ տապանակին հնոյ և նո-րոյս Ս. Եկեղեցւոյ: լ Մատլէն (Գարաթաշ):
10-23 *** Կ. բծ Վարդավառ: Միջոց ուտիք չորս շաբաթ է:
11-24 ** Բշ. բկ Յիշատակ Մեռելոց (Գանչէշմէ):
12-25 Գշ. գծ:
13-26 Դշ. գկ պհ Նոր լուսին:
14-27 Եշ. գծ Եսայի մարգարէ: ա. Տապուպէն:
15-28 Ո. գկ պհ ա Կիրակոս: Նշ գծ Երանեալ: Հշ ած էակից:



16-29 ** Շ. ած Թադդէի և Սանդխտոյ: Թյ:
17-30 * Կ. ակ Հարսանիք: յ Այխա Մարինա:
18-31 Բշ. բծ Կիպրիանոս, Յուստինէ, Եւփիմէ, Քրիստինէ, Սամ Եէլի:

## ՕԳՈՍՏՈՍ նոր տումար

19 Յուլիս հն, 1 Օգոստոս նոր տումար, Գշ. բկ Աթանագինեայ:
20-2 Դշ. գծ պհ յ ռ ա Ս. Եղիա: դ Ս. Յովսէփ:
21-3 Եշ. գկ Նախահարցն:
22-4 Ո. գծ պհ:
23-5 Շ. գկ Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկան, Գրիգորիսի, Դանիէլի: 1851 Ծնունդ Պ. Պօ-ղոս Նուպարի: Ցնծատօն:
24-6 * Կ. ած Այսօր չնիկ տօղը կ՚անհետանայ: լ բկ աս մլ մրն Վարդավառ:
25-7 Բշ. ակ Եղիազարու, Շամոնեայ:
26-8 Գշ. բծ 12 մարգարէից: յ Այլա Բարաս-քէվի: ք Մծբնայ Ս. Յակոբ Հայ Արշակունի:
27-9 Դշ. բկ պհ: յ Այլոս Բանտալէէմոնս:
28-10 Եշ. գծ Սոփիա, Ագապի, Ելպիս, Պիսթիս: 1920 Թուրքիա տորագրեց խաղաղութեան դաշնագիրը: Եւ սակայն 1925էն վերջը կը տեսնուինք:
29-11 Ո. գկ պհ լ Կոյս Ֆիլոմէն: Տօթագին օրեր:
30-12 Շ. գծ Գրիգորի Աստուածաբանին: ա Մար Էմպէքեարեզ:

31-13 * Կ. գկ հշ ըկ Որ յերկնային։ հ գկ յարժ. էջ հրեշ։

1-14 Բշ. աձ Կիրակոս, Յուլիտա, Գորդիոս, Բոլիկտոս։ Այսօր հն Օգոստոս 1 է։

2-15 Գշ. ակ Վահան, Եւգինէ։ լ մրն աս մլ քկ Վերափոխումն։ Սփ հկ։

3-16 Դշ. բձ պհ լ Սան Ռոքքօ։

4-17 Եշ ըկ Եւգինէոս, Մակարիոս։

5-18 Ու. գձ պհ։

6-19 Շ. գկ Եփեսոսի Ս. Ժողովոյն։ Հայոց Աւելեաց օրեր։ յ ռ ա ք գ Վարդավառ։

7-20 * Կ. գձ հշ Փառաւորեալք գքեզ։ Բարեկենդան Աստուածածնի։

8-21 Բշ. դկ պհ։

9-22 Գշ. աձ պհ։ քկ Բառտաք Առաքեալ։ զ Վերափոխում։

10-23 Դշ. ակ պհ։

11-24 Եշ. բձ պհ ** Հայկական ամանոր. 4415 թուին Նաւասարդ առաջին ամսին առաջին օրն է այսօր։ Մենք ունինք մեր սեփական կաղանդը։ Շնորհաւոր նոր տարի։ հկ։ հանդէս։

12-25 Ու. ըկ պհ։ 998ին իշխեց Սիւնեաց Փառաշ Զաւանչիր։

13-26 Շ. գձ հայոց և հռ Տօն Շաղակաթի էջմիածնի։ նշ Հոկում ի Պեղկամա, Գրնըգ, Գաստպա, Գըրգաղաճ, Գօրտէլիօ, Սէօքէ (Գուշատա), Այտըն, Պայընտըր, Տէնիզլի։

14-27 *** Կ. գկ Հայոց և հռ. Վերափոխում. Միջոց ուտիքը երեք շաբաթ է։ Խաղողօրհնէք։ հկ քկ աս Օր մեռելոց։

15-28 Բշ. գձ ** Յիշատակ Մեռելոց (Գանչէշմէ)։ յ ռ ա ք Վերափոխումն։ Սփ հկ։

16-29 Գշ. գկ լ մլ մրն աս Մկրտիչ Կարապետ։ քկ Յիշատակ ուղղափառ պատրիարքաց ննջեցելոց։

17-30 Դշ. աձ պհ լ Ռօզա։

18-31 Եշ. ակ։

## ՍԵՊՏԵՄԲԵՐ Նոր տումար

19-1 Ու. բձ պհ։ Բարի ամիս։

20-2 Շ. ըկ։ Հոկում (Պայրամըը)։

21-3 ** Կ. գձ Պայրամըըի Ս. Թագաւոր։ 967-998 իշխեց Սիւնեաց մէջ Վարդ-Զագիկ Զորբորդ Զաւանչիր։ Խելանիներուն խօսքին ուս մի՛ տար, ո՛ւշ տուր։

22-4 Բշ. գկ։

23-5 Գշ. գձ։ Յովակիմայ, Աննայի և Եղարեր կանանց։ Հայ ապրիչներու տօն։

24-6 Դշ. գկ պհ։

25-7 Եշ. աձ։ Ս.Մ. տօն արուեստաւորաց։

26-8 Ու. ակ պհ։

27-9 Շ. բձ։ Թովմասի, Յակոբայ, Շմաւոնի։ նշ ակ Որ նախիմաց։ Կեցո։ Ընկալ։

28-10 * Կ. ըկ Ս. Կոյսին գօտւոյն գիւտը։ Հարսնիք։

29-11 Բշ. գձ Սախփանոսի Ուլնեցւոյն, Գոհարիկի՝ Ղպթիներու տարեմուտ 1639 թուին:
30-12 Գշ. գկ Եզեկիէլի, Զաքարիայ: զ Գլխատումն Մկրտիչ Կարապետին: ք Սիմէոնի, Բարսաբայ և ընկերացն տօն:
31-13 Դշ. դձ պհ:
1-14 Եշ. գկ Յովհ. Կարապետին և Յոբայ: լ մէ ա մրն Խաչվերաց: յ Եկեղեցական տարեմուտ: Սիւնակեաց Սիմէոն: հն Սեպտեմբեր: Աշխատութեան ժամանակը առաքինութեան եղանակն է:
2-15 Ու. ած պհ:
3-16 Շ. ակ: Նիկիոյ Ս. Ժողով:
4-17 * Կ. բձ: Բարեկենդան պահոց Խաչվերացի: հշ գկ: Անձաւելի: հ բձ: Ի գերեզ: Ելին ի գերեզ:
5-18 Բշ. պհ հշ բկ Տէր Աստուած հարցն:
6-19 Գշ. գձ պհ: * 1918 Արարատի հերոսամարտին Յրդ տարեդարձը: Ազգային յարգանք դիւցազնաբար ինկող կտրիճներու յիշատակին:
7-20 Դշ. գկ պհ: զ Ծնունդ Ս. Կոյսին: յ ո ա ք Բարեկենդան Ս. Եղիայի:
8-21 Եշ. գձ պհ * Ծնունդ Ս. Կոյսին:
9-22 Ու. գկ պհ:
10-23 Շ. աձ: Այսօր հայոց Հաւի ամիսը կ'սկսի:
11-24 *** Կ. ակ: Խաչվերաց (Մանիսա):
12-25 ** Բշ. բձ: Յիշատակ Մեռելոց (Պանշէշմէ):
13-26 Գշ. բկ մէ Աւետարանիչ Յովհ: ք Ս. Խաչ:



նոր լուսին: Բարի ամիս:
14-27 Դշ. գձ պհ յ ո ա զ: Խաչվերաց:
15-28 Եշ. գկ:
16-29 Ու. գձ պհ:
17-30 Շ. գկ: 958-967 կառավարեց Սիւնեաց իշխանութիւնը Զաւանշիր Վահանիկ, որ չորս տարի ալ կաթողիկոս եղաւ ամենայն հայոց: ւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ:

## ՀՈԿՏԵՄԲԵՐ Լա տումար

18-1 * Կ. աձ: Հայոտօն: Վարագայ Ս. Խաչի բարեկենդան: հ աձ ըստ կանոնս:
19-2 Բշ. ակ պհ: Մամասայ, Սիւնակեցի: հշ ակ Ս. Աստուած:
20-3 Գշ. գձ պհ: Փերրոնէ, Մարիանէ, Շուշանիկ:
21-4 Դշ. բկ պհ հշ գձ: Փառ. է անուն:
22-5 Եշ. գձ պհ: Բարդամ, Անթհիմոս, Երանոս: 1920 Իգդիր այցելեց ազգային հերոս Զօրավար Անդրանիկ Օզանեան: Տիար Ղուկաս և Տիկ. Մարլէն Եսայեան լիակատար ապրնջականութիւն ցոյց տուին մեր անման հերոսին, զինքը հիւրընկալելով իրենց Բարափի արծուենիչ ապարանքին մէջ: Միջազգային ծափաղջոյնի արժանացաւ Տիար Զարեհ Պաքրըձեան՝ որ իր փառահեղ ինքնաշարժը հերոսին տրամադրելէ զատ, ինքը եղաւ շօֆէօր: Խանդավառ ընդունելութիւն:

23-6 Ո. գկ պհ:

24-7 Շ. գձ: Սրբոյն Գէորգայ Զօրավարին: հ ակ նշանաւ: Քս. Ս. Խաչիս: կեցո: Պահպանեա: 1920 Զօր. Անդրանիկ, Տիկին Մատլէն եսայեանի կենցաղագէտ անձնուիրութեան շնորհիւ, ամէն օր կ'ընդունէր բարձրաստիճան հիւրեր:

25-8 ** Կ. գկ Վարագայ Ս. Խաչ: Միջոց ուտիքը 8 շաբաթ է:

26-9 Բշ. աձ յ ս Ս. Յովհ. Աւետարանիչ: 1918 Ֆրանսական 223 սաւառնակներ նահանջող գերմաններուն վրայ յարձակեցան:

27-10 Գշ. ակ գկ: Եղիա մարգարէ:

28-11 Դշ բձ պհ:

29-12 Եշ. բկ Սահակայ և Համազասպայ: 1918 Ֆրանս. 350 սաւառնակներ յարձակեցան գերմաններուն վրայ:

30-13 Ո. գձ պհ յ ս դ ա Ս. Գր. Լուսաւորիչ:

1-14 Շ. գկ 72 աշակերտաց: հն Հոկտեմբեր:

2-15 * Կ. գձ հ Անագին: Հարսանիք:

3-16 Բշ. դկ Փոկասու: պ Ծնունդ Ալիի:

4-17 Գշ. աձ Վառվառիա կոյս:

5-18 Դշ. ակ պհ:

6-19 Եշ. բձ Եպրաքսիա կոյս: Այսօր Սէօքէի Եպրաքսեան երկսեռ վարժարանին տօնախմբութիւնն է: Տարիողէլի է Գասպար Մարեանի անձնուէր ջանքը իր վերակացու պաշտօնի և եկեղեցւոյն: Ապրին տանիկ խնամքն ապեաները:



7-20 Ո. բկ պհ:

8-21 Շ. գձ Մաշթոց, Եղիշէ, Մովսէս, Դաւիթ Նարեկացի, Յովհ. և Գրիգոր, Կլայեցի Գրիգոր և Ներսէս, Լամբրոնացի Ներսէս և ուրիշ հայանուէր թարգմանիչներ:

9-22 * Կ. գկ Հարսնիք: Հ. գկ զԱստուածային, զքո յար:

10-23 Բշ. դձ Գրիգորիս, Թաթուլ, Վարրոս, Խոստովանակաց: Այսօր մեր Սահմի ամսին առաջին օրն է: Բարի ամիս:

11-24 Գշ. դկ Անանիա, Մատթէոս, Պարնապաս, Փիլիպոս: 1916 գերման բանակները փճացան Վէրտէօնի առջեւ:

12-25 Դշ. աձ պհ: 1920 Մահ հելլէն Աղեքսանդր արքային: Նոր լուսին: Բարի ամիս:

13-26 Եշ. ակ Դիոնիսի, Թիմոթէի, Թիթիսի:

930-958 իշխեց Սիւնեաց մէջ Զուանշիր երկրորդ հայր Վահան կաթուղիկոսի հայոց:

14-27 Ո. բձ պհ:

15-28 Շ. բկ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս: Տօն անուան Զմիւռնիայի հայակաց գրագէտ Ղուկաս Վալպեռեանի:

16-29 *Կ. գձ հ գձ Իւղաբեր: Այսօր յար. ի խաչանիչ:

17-30 Բշ. դկ Ղունկիանոսի, Յովսէփու, Ղազարու, Մարթայի և Մարիամու: 1918 Թուրքիա զինադադար կնքեց:

18-31 Գշ. գձ Թէոդիտոսի, Զենոնի, Ռոմէլայ:

## ՆՈՅԵՄԲԵՐ Նոր տումար

19-1 Դշ. պհ գկ: Ամ. ընտրութեան ամիս:
20-2 Եշ. աձ Խարիթեանց:
21-3 Ու. ակ պհ:
22-4 Շ. բձ 12 վարդապետաց:
23-5 * Կ. բկ Գիւտ Խաչ: Հարմնիք:
24-6 Բշ գձ Անաստասայ, Ուալերոսի, Թհէոդիտոնի:
25-7 Գշ. դկ Հիպէրիքեանց: հշ աձ գքեղ արդար: քկ Եւգինէ կոյս: ք Վկայ Փէթիան:
26-8 Դշ. դձ պհ հշ դկ Ս. Ած. հայր: յ Դմիտրի: Գաւըմ: մէ մրն աս հրեշտակապետ Միքայէլ:
27-9 Եշ. դկ Սեւերիանոսի, Բարեկլոսի:
28-10 Ու. աձ պհ: աս Պէհնամ և Սառա:
29-11 Շ. ակ Յովհաննու Ոսկեբերանի: Լ. Մարթէն:
30-12 * Կ. բձ հ.բձ Ջայն աւետ: Հարմնիք:
31-13 Բշ. բկ Սոփոնիանեանց: մէ մրն աս քկ Ոսկեբերան:
1-14 Գշ. գձ Ակիւսիմեայ, Աւիթալայի, Բլատոտոնի: յ Կոզմայի և Դամիանոսի: հն Նոյեմբեր:
2-15 Դշ. պհ գկ:
3-16 Եշ. գձ: Մարկիանոսի, Միթրոփանոսի:
4-17 Ու. դկ պհ նշ:
5-18 Շ. աձ: Գաբրիէլի, Միքայէլի, Քէրովբէի, Սերովբէի, Զաւարթանի և այլն և ամենայն երկնային զօրաց:
6-19 * Կ. ակ հ ակ: Յարութեան և Սքանչելի: Հարմնիք: լ Եղիսաբեթ դշխոյ Հանգարիոյ:



7-20 Բշ. բձ Մելիտոսի, Մինասայ:
8-21 Գշ. բկ Դեմետրեայ, Բասիլիսկոսի: լ մէ մրն քկ աս Ընծայումն Ս. Աստուածածնի: յ ռ ա Միք. հրեշտակապետ:
9-22 Դշ. գձ պհ: Հայոց Տրէ ամիսը այսօր կ՚սկսի:
10-23 Եշ. դկ Գուրիասայ, Սամոնասայ: Ամ. Որ շնորհակալութեան:
11-24 Ու. դձ պհ:
12-25 Շ. դկ Անդրէասայ և Փիլիպպոսի: լ Կատարինէ: յ Ողորմածի Յովհաննու: 925-930 իշխեց ի Սիւնիս Վասակ երկրորդ Զուանշիր, մեծ հայր Վահան կաթողիկոսի հայոց:
13-26 * Կ. աձ Հարմնիք: հ աձ Որ անձառ զվերջըն: յ Ոսկեբերանի: Նոր լուսին:
14-27 Բշ. ակ Անդրէի զօրավարին: քկ Ս. Յակոբ: յ Փիլիպպոս:
15-28 Գշ. բձ Ագրիանոսի, Անաթօլայ, Ելեւթերոսի, Թհէոտորոսի: հշ դձ Որք զանջանս: յ ռ Սկիզբն պահոց ծննդեան Յիսուսի:
16-29 Դշ. բկ պհ հշ դձ Հարցն մերոյ Աստուած որ ի նեղ: յ Մատթէոսի Աւետարանչին:
17-30 Եշ. գձ Աբրահամու, Խորենայ, Ածառրոյ և անարծաթ բժշկացն Կոզմայի, Դամիանոսի: հշ գձ յուս: աս Մծբնայ Ս. Յակոբ: ա ք Աւետումն Զաքարիայի: լ ա կ Գոլատեան:

## ԴԵԿՏԵՄԲԵՐ Նոր տումար

18-1 Ո. գկ պհ:

19-2 Շ. գծ ** Ամենայն սրբոց:

20-3 * Կ. գկ հշ Օրհնեալ ես: հ գկ Հրեշտակաց և հրեշտակք քո: Բարեկենդան պահոց Ցիսնակի: Նշ ակ Որ նախնմաց: Կեցո. ընկալ: զ Տօն Ս. Ծերոց: աս Վառվառիա և Յուլիանէ:

21-4 Բշ. ած պհ ** հայոց հա յ ա դ Ընծայումն Ս. Աստուածածնի երից ամաց ի տաճարն Սողոմոնի:

22-5 Գշ. ակ պհ հշ ագց գծ Օրհնեալ ես յաւիտ:

23-6 Դշ. բծ պհ հշ գծ Որ ամենայնի: մրն աս և մլ Նիկօլաոս:

24-7 Եշ. բկ պհ հշ գծ Ճշմարտապէս: ա ք Աւետումն Կուսին:

25-8 Ո. գծ պհ հշ հգ բծ Որ Թագ: մն Խաչի: գծ Անուանեալ: լ մրն աս քկ Անարատ յղութեան: յ Նեքտարինէ:

26-9 Շ. գկ Գրիգոր Սքանչելագործին և այլն: մլ Անարատ յղութեան: աս Պէհնամ և Սառա:

27-10 * Կ. գծ ա կ Ցիսնակի: Հարանիք: հշ ակ Անեկեզբ: հ գծ Որ ի վերդ:

28-11 Բշ. գկ Յուլիանեայ և Վասիլաւհեայ: հշ գծ Սուրբ ես Տէր զօր:

29-12 Գշ. ած Ղունկիանոսի:

30-13 Դշ. ակ պհ լ Լուծիա կոյս: յ Անդրէաս: ա ա Մծբնայ Ս. Յակոբ:



1-14 Եշ. բծ Կղեմայ և Բագարատայ: հն Դեկտ:

2-15 Ո. բկ պհ հշ հգ մն Խաչի: Նշ:

3-16 Շ. գծ ** Թադդէի և Բարթողմէի: Թյ հկ: Մեծահանդէս հոգեհանգիստ Հայաստանի այցելող բոլոր գործիչներուն համար:

4-17 * Կ. գկ ը կ Ցիսնակի: Հարանիք: հշ բծ Որ Թագաւորդ ես: հ գկ Աւետալ: յ ա Վառվառիա, Յուլիանէ:

5-18 Բշ. գծ Գենարիոս: յ Ալի Սամա:

6-19 * Գշ. գկ Նախավկայ և ի Քրիստոս հաւատացեալ անդրանիկ Թագաւորին Արշակունի հայոց Աբգարու, Որոհէ քրոջն և Հեղինէ Թագուհւոյն: մն հ բկ Ով երանելիքդ ամենեցուն: հկ յ ա Ս. Նիկոլաոս:

7-20 Դշ. ած պհ: Հայ ազգը առաջին աստուածապաշտ ազգն է հրեաներէն առաջ. Հայկը Աբրահամէն առաջ աստուածապաշտ էր:

8-21 Եշ. ակ Հարցն Եփեսոսացւոց: լ Թովմաս: աս քկ Սպառումն Ս. Կուսին: ա ք Յովհ. Մկրտիչ: նշ ակ Որ նախնմաց: Կեցո: Ընկալ Տէր: Հըռկում:

9-22 Ո. բծ ** հայոց հա յ ա Յղութիւն կուս Ս. Աստուածածնի յԱննայէ: պ Մահ Ալիի: Առաջին օր հայոց Քաղոց ամսին:

10-23 Շ. բկ Ս. Նիկողայոսի:

11-24 * Կ. գծ հշ բկ Որ զծառայի: հ գծ Փառաւ: ամ լ մլ մրն քկ Ճրագալոյս Ս. Ծննդեանն փրկիչ Յիսուսի: Բարեկենդան:

12–25 Բշ. գկ Ս. Յակոբայ պահք։ Կորստագիւտ Ս. Մինասայ, Երմոգինեայ, Գրաբոսի, Յովհաննու և Ալեքսիանոսի։ Լ քկ մրն աս մլ ամ Ծնունդ Յիսուսի։ Սփ. հկ։

13–26 Գշ. գծ Պօղիկարպոսի և Արարատեան նահատակաց։ Նոր լուսին։ Իզմիրահայ վերմակագործներուն տօնն է։ Լ Ստեփանոս։

14–27 Դշ. դկ պահք։ հշ դկ Աստուած հարցն մերոց ող։

15–28 Եշ. ած պահք։ Եւստրատիոս, Օգսէն, Եւգինէոս, Ովրէս, Մարդար և Մարգար։ մն և հ շկ Որ զհուր սիրոյ քո։

16–29 Ո. ակ պահք։

17–30 Շ. բծ ** Ս. Յակոբ։ հկ։ Այսօր Զմիւռնահայ Որբանոցի պաշտպան (Յակոբ) Միհրան Աղնաւորեանի անուան տօնն է։ Աստուած պահէ ազգիս բոլոր բարի Յակոբները։

18–31 * Կ. բկ Հարանց։ հշ գծ փառ. որդի։ հ Քս. յար. ի մեռ. առաւ. կանոն։ 914–925 իշխեց Սիւնիքի մէջ Զագիկ երրորդ Զաւանշիր։





# ՅԱՒԵԼՈՒԱԾ



Տէր Փիլիպպոս վարդապետ Կարապետեան Զմիւռնիացի, ժամօրհնող Ս. Ստեփանոսի Յամի Տեառն 1806

Պայծառ վարուց յար հետեւակ
Բարուն ըզգօն հոգեվաստակ,
Հայր Փիլիպպոս ընտիր որդեակ,
Առն Յակոբայ Զմիւռնաբընակ
Յուսման զըրոց աշխատունակ
Հեզ եւ համբոյր դաստիարակ.
Ժամօրհնող լեալ բազմամեակ,
Աչեաց ծաղկօք զերփառունակ.
Ջեռմն աղօթից անօք յըսակ
Յայգի բանին անխոնջ մըշակ,
Որ ի կենացն հասեալ պըսակ
Յանվիշտ դիմեաց սուրբ ագարակ։

Տապանաքարս այլուր յիշուած չէ. այսօր կը գտնուի Զմիւռնիայի Ս. Ստեփանոս մայր եկեղեցւոյ բակումը, նախասռակ Կարմնեցի Յարութիւնի շիրմին քով։ Կը պատմուի

թէ լուսահոգին լաւ եւ ճարտար խօսող մըն էր, դաստիարակ մը, հովիւ մը աչալուրջ։ Հոգելոյսին ազգասիրական ծիրքերը ժառանգած է շառաւիղը այդ տոհմին ծանօթ ազգասէր «Յակոբ Կարապետեան եւ Գրիգոր Գարագաշեան» վաճառատան հոգին առեւտրական Յակոբ Կարապետեան, որդի Սագըզլը բարեհամբաւ Կարապետի, որ ամուսնացած էր Գիթըազարը դերձակ Սարը Յակոբի Հռիփսիմէ աղջկան հետ։ Կ. Պոլսեցի Գրիգոր Գարագաշեան ամուսնացած է Յ. Կարապետեանի քեռաղջկան Օր. Ղեւոնդուհւոյ հետ։ Աստուած բարի ժառանգ պարգեւէ։



# ՃՇՄԱՐԻՏ ՀԱՅՈՒՆ ԾՐԱԳԻՐԸ

*Անուն*.— Կուսակցութեան անունն է Հայ Ռամկավար Կուսակցութիւն։

*Նպատակ*.— Ապահովել, պահպանել Միացած Հայաստանի անկախութիւնը, աշխատիլ Հայաստանի քաղաքական, տնտեսական և բարոյական բարգաւաճման, ծառայել ազգային լուսաւոր քաղաքակրթութեան մը զարգացման, ամրապնդել բարոյական կապերը Հայաստանի և Արտասահմանի հայութեան միջեւ, քաջալերել ներգաղթը դէպի Հայաստան, ռամկավարական սկզբունքները իբրեւ հիմ ծառայեցնել Հայաստանի սահմանադրական սկզբունքներուն։

*Պետական կազմ*.— Կուսակցութիւնը հիմնուած ըլլալով ժողովրդային վեհապետութեան և քաղաքացիական հաւասար իրաւունքներու սկզբունքին վրայ, Հայաստանի կառավարութեան ձեւ կ՚ընդունի Ռամկավարական Հանրապետութիւն։

Գլ. Ա. — 1) Հայաստանի ամէն քաղաքացի բացարձակապէս հաւասար է օրէնքին առջեւ: 2) Կը վայելէ քուէարկութեան հաւասար իրաւունք, առանց սեռի խտրութեան: 3) Ներկայացուցչական բոլոր մարմիններու ընտրութիւնը կը կատարուի ընդհանուր, հաւասար, ուղղակի, գաղտնի քուէարկութեամբ և համեմատական սկզբունքով: 4) Զինուորական պարտաւորիչ կըրթութիւն և ի հարկին պարտադիր հաւասար զինուորական ծառայութիւն: 5) Հայերէն լեզուն հայ ռամկավարական հանրապետութեան պետական պաշտօնական լեզուն է, իսկ տարբեր լեզուները կը վայելեն ազատութիւն: 6) Ընդհ. ձրի պարտաւորիչ նախակրթութիւն: Ձրի, բայց կամաւոր միջնակարգ, բարձրագոյն, մասնագիտական կըրթութիւն: 7) Խօսքի, մամուլի, հանրագրութեան, հաւաքումներու, ընկերակցութեան, ճամբորդութեան ազատութիւն: 8) Խիղճի, կրօնի, պաշտամունքի ազատութիւն: 9) Անձեռնմխելիութիւն անձի, անբռնաբարելիութիւն ստացուածքի, նամակի: 10) Հրապարակային դատավարութիւն, երդուեալ դատաւորներու դրութիւն: 11) Վարչական ապակեդրոնացում, համաձայն պետութեան հիմնական օրէնքներուն:

Գլ. Բ. — 1. Հրատարակուած օրէնքները, որ կ'ընծայեն զարգացման հաւասար պատեհութիւն բոլոր քաղաքացիներուն, կ'ապահովեն արդարութեան գործադրութիւնը պետութեան ընկերական-



տնտեսական կեանքին մէջ: 2) Հիմնարկութիւն պետական դրամատուններու, որպէսզի ընծայեն դիւրամատչելի վարկ քաղաքացիներուն: 3) Կանոնաւորում օրէնսդրական միջոցներով՝ աշխատութեան, դրամագլուխի փոխադարձ յարաբերութիւններուն: 4) Արդար, համերաշխ գործակցութիւն, շահակցութիւն դրամագլուխի և աշխատութեան միջեւ հաշտարար ատեաններու միջոցով: 5) Պետական վերհսկողութիւն աշխատանքի ժամերու, վարձատրութեան, չափի, գործավայրերու առողջապահական պայմաններու: Իգական սեռի և անչափահասներու աշխատութեան պայմաններու մասին մասնաւոր օրէնսդրութիւն: 6) հաստատում պետական գրասենեակներու (պիւրօ), իբրեւ միջնորդ գործատէրի և գործաւորի միջեւ, որպէսզի գործ հայթայթուի անգործներու: 7) Պետական ապահովագրութիւն՝ պաշտպանելու համար ամէն կարգի աշխատաւորներ՝ անգործութեան, հիւանդութեան, արկածի, ծերութեան, մահուան ընդդէմ, ինչպէս նաեւ երաշտի, հեղեղի, կարկուտի և այլն: 8) Օրէնսդրական մասնաւոր միջոցներով քաջալերել պաշտպանել երկրագործութիւնը, առանձին ճարտարարուեստը: 9) Պետութեան կը պատկանի հանքերու, անտառներու, ջուրերու և ուրիշ բնական հարստութիւններու արդիւնագործումը: Կառավարութիւնը, իր վերհսկողութեան տակ, կարող է տալ անոնց շահագործումը անհատնե-

րու կամ ընկերութեանց որոշ ժամանակաշրջանի մը համար: 10) Պետականացում թղթատրութեան, հեռագրի, հեռախօսի, երկաթուղիներու: Կառավարութիւնը կրնայ՝ իր վերհսկողութեան տակ, երկաթուղիներու, հեռագրի, հեռաձայնի մենաշնորհը տալ անհատներու կամ ընկերութեանց, որոշ ատենի մը համար: 11) Քաղաքապետութեան կը պատկանի հանրակառքերու, լոյսի, ջուրի մատակարարութիւնը: Ան կրնայ տալ անոնց մենաշնորհը, որոշ ատենի մը համար, անհատներու կամ ընկերութեանց: 12) Քաջալերում՝ քօօբէրաթիվ համագործակցական ընկերակցութիւններու կազմակերպումին, ծաւալումին: 13) Պետական հասոյթի հայթայթում՝ տուրքի արդար բաշխումով, որպէսզի չի ճնշուին անհատական, ընկերակցական ձեռներէցութիւնը և երկրին արդիւնաբերական, առևտրական գործունէութիւնը: 14) Յառաջատուական տուրք՝ հողի, կալուածի արժէքին վրայ: 15) Աստիճանական ջնջում անուղղակի տուրքերու:

Գլ. Գ.— 1) Կուսակցութիւնս կ՚ընդունի հողային սեփականութեան իրաւունքը: 2) Հողին անհատական սեփականատիրութիւնը կը սահմանաւորուի Խորհրդարանին կողմէ քուէարկուած հողային օրէնքներու համաձայն: 3) Սեփականատիրութեան ընդհանուր պայմանն է հողին մշակութիւնը և արդիւնագործումը: Ներկայ հողային սեփականատիրութեանց իրաւունքները կը ճըշ-



տուին նոյն սկզբունքին կիրառութեամբը: 4) Հողագուրկ և սակաւահող գիւղացիներու ձրիաբար հող կը տրուի պետական տնօրէնութեամբ, հողային ընդհանուր օրէնքի համաձայն: 5) Հողային բաշխման չափանիշը կ՚որոշուի տեղական պայմաններու, հողի որակին և աշխատութեան չափին համեմատ: 6) Պետութիւնը իրաւունք ունի գրաւելու անհատներու և ընկերութիւններու սեփական հողերը, երբ այդ հողերը օրէնքով սահմանուած չափանիշէն աւելի են, նաև այն հողերը և անշարժ ստացուածքները, որոնք անհրաժեշտ են հանրօգուտ նպատակներու համար, արդար հատուցում ընելով անոնց տէրերուն: 7) Գրաւման ենթակայ չեն այն հողերը, որոնք թէև չափանիշէն աւելի են, բայց կը ծառայեն հանրային, մշակութային, բարեգործական հաստատութեանց պահպանման: Այն հողերը որոնք իբր պարտէզ, այգի, մրգաստան, փորձադաշտ, բուծարան և այլն իրենց վրայ կը կրեն մասնաւոր աշխատանքի և դրամագլուխի արդիւնքը: Այն հողերը՝ որոնք կը պատկանին գործատուներու, ճարտարարուեստական հիմնարկութիւններու, որոնք անհրաժեշտ են անոնց գործածութեան համար: 8) Ընդհանուր հայ ժողովուրդին նուիրաբերութեամբը գոյացած վանքերու, եկեղեցիներու սեփ. հողային ստացուածքները գրաւման ենթակայ չեն: Սակայն պետութիւնը կը հսկէ անոնց արդիւնաւորման և նպատակայարմար

գործածութեան վրայ։ 9) Հողային օրէնքները կը գործադրուին աստիճանաբար բնակչութեան թիւին, մշակումին պահանջներուն և տեղական պայմաններուն համեմատ։

*Վերաքննութիւն*.— Ներկայ ծրագիրը վերաքննելի է Հայ Ռամկավար կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական Ժողովին կողմէ, հիմնական կանոնագրին տրամադրութեանց համաձայն։





# ՅԱՆՁՆԱՐԱՐԵԼԻ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

ԼՈՒՎՐԸ, մեծ վաճառատուն, Ֆրանկաց թաղ, Արթաքի Գալփակեան:

ԼՕՆԺԻՆ, Չուխա Պէզէսթէն, 21, Միհրան Բումեան:

ԿՐԱՄՕՖՕՆ, Պաշճըլար Իչի, Յակոբ Պ. Հաշաճեան:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ, Լօֆաշ Զօնիշէր, 5, Յ. Փ. Միսիր:

» » » 19, Ոսկեան Փափազեան:

» Բեշիքթաշճօղլու խանը, 2, Կ. Ո. Ոսկան:

ՏՊԱԳՐԻՉ, Իմամ փողոց, 87, Քէչիչեան Եղբարք:

ԲԺՇԿԱՊԵՏ, Հոլանտական հիւանդանոց, Տօքթ. Ա. Ճէլէպ:

ՃՈՐՏԱՐ ԲԺԻՇԿ, Տօքթ. Ս. Գալբագճեան, Մէհրաբէ փողոց, Հայնոց, թիւ 6:

ԳԱԶԻՆՕ, Գաֆէ ճօն Պուլ, նաւամատոյցին դէմ:

ՍԻՆԷՄԱ, Ասանիւօր, Գարաքաշ, Թէլլալեան Եղբարք:

ԼՐԱԳԻՐ, «Արեւելեան Մամուլ», Հայնոց, Մոսա փողոց:

ԱՌՈՂՋԱՐԱՐ, «Միմոս» շաքարաւէտ, Քէշիշեան Տղաքն:

ՍԻԿԱՌԻ ԹՈՒՂԹ, Կիլիկեան, Տէրտէր փողոց, 4, Դ. Պինեաքեան:

ԹՕՀԱՖԻՑԷ, Առաջնորդարանի դէմ, Ջարեհ Գէորգեան:

ՀՐԴԵՀԻ ԴԷՄ, Բարաքի, Ժ. Տ Աշքէրա եւ Որդիք:

ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐ, թիւ 116, 226, 227, Հայ Լայֆի առջեւ:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ, Քաննօբուշու, Ֆրանկաց թաղ:

ՃԱՐՏԱՐ ԲԺԻՇԿ, Հայնոց, Րէշիտիէ, Տք. Մ. Փէշթիմալճեան:

ՏՆԱՇԷՆ վաճառատուն, Ազնաւուրեան Միհրան, Իզմիր:

ԽՆԱՅՈՂ, Պանքօ տի Ռօմա, Բարաֆէնց վրայ:

ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ, Հայրապետ Շահնուր, թղթատան դէմ:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ, Կիւզէլեան-Գօճամանեան, Այ-Եօրկի փող.

ՋԷՆԻԹ, Վահան Զմիւռնիալեանի, Զուխա Պէզէսթէնի:

ԹԻՐՕԽՐՕՄՕԼԻԹՕԿՐԱՖ, Թաղիլեանի, Ֆրանկաց փող:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ, Շմարձմանի » »

ՖԷՄԻՆԱ, Վազելէնէ հագուստի համար » »

ԿԱԼԸՐԻ ՄՕՏԷՐՆ, թիւ 73 » »

ԵԱՆՈՒԼԻ թիւ 9, մաքուր օղի:

ՀՈՎԱՆՈՑ, Յ. Պօղաննեանի, Շիշհանիշէր:

ԹՕՀԱՖԻԷ Միքայէլ Փափազեանի, Այ-Եօրկի:

ՀՈՎԱՆՈՑ, Իլիա Գօգօլի, Մասաճա խանի:

ԺԱՄԱՑՈՅՑ. Զախարօֆ, Ֆրանկաց փող, 10:

ԴԵՐՁԱԿԱՏՈՒՆ, Վանէլի » » 93:

» Աղամ Պէրպէրեանի, Զուխա Պէզէսթէնի:

ԸՄՊԵԼԻՔ. Սրավէրա, Մայրէզ, 1-2:

ՇԱՔԱՐԵՂԷՆ, Զաւղօնի »

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ, Նէվշէհիրլեանի, Ֆրանկաց փող, 34:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ, Աճառնի Գրգեաշարեանի, Հասգիւղ, Բէշիքթաշ:

ԲԵԹԲԱ ՔԱՆՁՕՍ, գլխարկավաճառ եւ գլխարկ մաքրող, Ֆրանկաց փող, թիւ 7, Քիւփէճօղլու բասաժ:

ԳՕՍԹԻ, լուսագրավաճառ, Պօն Մարշէի դէմը:

Կ. Ս. ՊԱՂԱՊԱՆԵԱՆ, ալիւրի, նպարեղէնաց մեծ վաճառատուն, Ս. Ստեփանոս եկեղեցիին դէմը, Բէշիքթաշ: Ամառս կովի կաթ կը հայթայթուի, ամէն օր, փափագողներուն,

ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿԵԱՆ, դերձակ, շիք, բժախնդիր, Զուխա Պէզէսթէնի, թիւ 10:

**Ճաղմա, Խաղմա, Խաղմա** — Բիշէր եւ փօնաքիկ, ինչ որ աղէկ բան կայ, Կիւլ մանայլէ, Պօն Մարշէի դէմ, թիւ 22. Իզմիրի են շիք վաճառատունը %50 զեղչ: Չտեսնուած, չլսուած, չերեւակայուած: Փութացէք: Անօրինակ աժանութիւն:

ՎԱՀԱՆ ԶՄԻՒՌՆԻԱԼԵԱՆ, վաճառատուն Ջենիթ ժամացոյցներու, ոսկեղէն, արծաթեղէն ապառանջանաւոր ժամացոյցներու. գրպանի զանազան նուէրգու ժամացոյցներ:

ՆՈՐ ՀԱՅ ԲԱՂՆԻՔ, Հայոց փող, Այ Բարասքէվի փողոց, Հալըգարընարի ջուր: Կիրակի օրերը արանց համար. ուրիշ օրեր առտու 5-9, իրիկունը 6-12 արանց համար. կանանց համար 9-6, Չորեքշաբթի օրերը 9-1:

ԴԱՒԻԹ ԸՆՑԻՋԵԱՆ, նպարավաճառ. անխարդախ կարագ իւղ, չամիչի օղի, ամէն տեսակ նըպարեղէն. Հասգիւղ, Բէշիքթաշ, թիւ 26:

ԱԾՈՒԽ պատուական, անխառն, ընտիր, բոլոր եւ մէջէ, վախնալով եւ պարկով: Փոխադրութիւնը ձրի. վաճառում կանխիկ: Հասգիւղ, Այ-Բարասքէվի փողոց:

ՍԱՐԳԻՍ ՍԻՐՈՒՆԵԱՆ

☞ Բացուած է բաժանորդագրութիւնը Դաշինի բարոյաբերթին (ընտանեկան): Հասցէ՝ Իզմիր, Տպարան Բէշիշեանի, Համայէր Զուանիշիր:

ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

## ՋՈՒՏ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳՐՔՈՅԿՆԵՐ

| | | | |
|---|---|---|---|
| Ան եւ Մենք | Գին | 10 | ղրուշ |
| Օնոփրիկ | » | 15 | » |
| Ս. Սարգսի կեանքը | » | 10 | » |

## ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

Բիւզանդեան հայ կայսրներու եւ կայսրուհիներու կեանքէն թատերախաղեր: Հասցէ՝ Իզմիր Թէշիշեան տպարան, Համպէր Ջուանչիր։

17 ½ ՂՐՇ.

Օրացոյցին գինը կանխիկ 17,50 ղրուշ է:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 100 | հատ | գնողը | կը | վճարէ | կանխիկ | 15 ոսկի |
| 50 | » | » | » | » | » | 8 » |
| 25 | » | » | » | » | » | 4,25 » |

0021924
5352
ՀՀ Ազգային գրադարան
NL0021924